ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Կոտայքի մարզ Նոր Հաճըն համայնք

Տոռոզյան փ.շենք 7 nor-hachn-meriya@mail.ru

Հեռ. 0224 42550

Նոր Հաճըն համայնքի ղեկավար

Գագիկ Մաթևոսյանին

15.01.2024թ.

Ձեկուցագիր

Հարգելի պարոն Մաթևոսյան.

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ամփոփելով 2023թ. ընթացքում կայացված երկու հերթական նստաշրջանների ավագանու նիստերի արձանագրությունները, պարզվել է, որ ավագանու անդամ հանդիսացող, <<Վարդան Պապյան կուսակցությունների դաշինք>> խմբակցության անդամներ Վարդան Պապյանը և Նարեկ Ստեփանյանը անհարգելի պատճառով բացակայել են ավագանու նիստերից և քվեարկությունների ավելի քան կեսից, մասնավորապես՝ 2023թ. առաջին նստաշրջանի ընթացքում և Վ. Պապյանը, և Ն.Ստեփանյանը բացակայել են ավագանու բոլոր նիստերից և քվեարկություններից, իսկ 2023թ. երկրորդ հերթական նստաշրջանի ընթացքում /սեպտեմբերի 28-ից դեկտեմբերի 28-ը/ կայացված 5 նիստերից Վ. Պապյանը բացակայել է 3 նիստից և 35 քվեարկությունից, իսկ Ն.Ստեփանյանը՝ 4 նիստից և 53 քվեարկությունից /քվեարկությունների քանակը՝ 58/:

Համաձայն <ՏԻՄ> օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Ավագանու անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, եթե նա մեկ հերթական նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից կամ հանձնաժողովի նիստերի կեսից:

Առդիր՝ 2023թ-ի ավագանու նիստերի արձանագրությունների պատճենները:

Ձեկուցող՝ աշխատակազմի քարտուղար

Արման Սմբատյան